

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ.

N 530-Ն

Բ. Ստեփանակերտ

ՍՏՈՐԵԿԿՐԾԱ ՋՐԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՍՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի
N 226 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հնդեբի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ս շ ու մ է**.

1. Հաստատել ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած հանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին» N 226 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

ՍՏՈՐԵՐԿՐԹԱ ՋՐԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՔԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ

Լ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն դասակարգմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերֆոգտագործման պլորտում սահմանվում են՝

1) ստորերկրյա ջրերի (այսուհետ՝ ջրեր) շահագործական պաշարների խմբավորման, հաշվարկման և սահմանված կարգով պետական հաշվառման միասնական սկզբունքները՝ ըստ դրանց ուսումնասիրվածության աստիճանի և տնտեսական նշանակության.

2) արդյունաբերական յուրացման համար հետախուզված հանքավայրերի նախապատրաստվածության աստիճանը որոշող պայմանները՝ հաշվի առնելով դրանց ջրաերկրաբանական առանձնահատկությունները և շահագործման բնապահպանական պահանջները.

3) ջրերի կանխատեսումային ռեսուրսների գնահատման սկզբունքները:

2. Ջրերի շահագործական պաշարները դրանց այն ֆանակն է, որը, բնապահպանական պահանջների հաշվառմամբ, շահագործման ընդունված ռեժիմի դեպքում կարող է վերցվել հանքավայրից՝ տեխնիկատնտեսապես հիմնավորված ջրհան կառույցներով՝ պահպանելով ջրի պահանջվող ֆանակը և որակը՝ ջրօգտագործման հաշվարկային ամբողջ ժամկետում:

3. Ջրերի շահագործական պաշարները հաշվարկվում և հաշվառվում են հանքավայրում կատարված համալիր ջրաերկրաբանական հետախուզական աշխատանքների արդյունքների և դրանց փաստացի շահագործման տվյալների հիման վրա: Ջրերի շահագործական պաշարների մասին տվյալներն օգտագործվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման, ինչպես նաև արդյունաբերական յուրացման նպատակով նախապատրաստված հանքավայրերում ջրհան կառույցների նախագծման համար:

4. Ջրերի կանխատեսումային ռեսուրսները, որոնց առկայությունը ենթադրվում է ընդհանուր ջրաերկրաբանական պատկերացումների, գիտական նախադրյալների, երկրաբանական ու ջրաերկրաբանական ֆարտեզագրման արդյունքների, երկրաֆիզիկական, ջրաֆիմիական, ջրաբանական և ջրահաշվեկշռային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, գնահատվում են արտեզյան ավազանների, ջրաերկրաբանական զանգվածների ու շրջանների և այլ ջրաերկրաբանական կառուցվածքների սահմաններում և արտացոլում են դրանց հնարավոր օգտագործման հեռանկարները: Կանխատեսումային ռեսուրսների մասին

սվյալներն օգտագործվում են հետագա որոնողագնահատման աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև հաշվի են առնվում ջրերի համալիր օգտագործման և պահպանման սխեմաների կազմման ժամանակ:

5. Շահագործական պաշարները հաշվարկվում և հաշվառվում, իսկ կանխատեսումային ռեսուրսները գնահատվում են ըստ ջրերի առանձին տեսակների՝ խմելու և տեխնիկական, հանքային ջրեր (հանքային խմելու բուժիչ և հանքային խմելու բուժիչ-սեղանի), և սնտեսության մեջ դրանց օգտագործման հնարավոր ուղղությունների:

6. Կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորման և պաշարների հաշվարկման նյութերի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության կողմից (այսուհետ՝ գործակալություն) կատարվող պետական ընդերքաբանական փորձաքննության հիման վրա հաստատվում են կոնդիցիաների պարամետրերը և ջրերի շահագործական պաշարները:

7. Հաշվարկման, գնահատման և պետական ընդերքաբանական փորձաքննության են ենթակա բոլոր տեսակի ջրերի շահագործական պաշարները՝ անկախ դրանց ֆանակից, որակից և օգտագործման ուղղությունից:

8. Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրում և պետական ջրային կադաստրում պետական հաշվառման ենթակա են բոլոր տեսակի ջրերը՝ իրենց ֆանակական և որակական ցուցանիշներով, անկախ դրանց շահագործական պաշարների հաստատված կամ չհաստատված լինելու հանգամանքից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ջրերի շահագործական պաշարները հաշվարկվում և հաշվառվում, իսկ կանխատեսումային ռեսուրսները գնահատվում են խորանարդ մետր/օր-ով, իսկ շագջրային խառնուրդները՝ տոննա/օր-ով: Արդյունաբերական ջրերում, ինչպես նաև հանքային ջրերում, որոնցից նախատեսվում է կորզել օգտակար բաղադրիչներ, որոշվում է նաև հիմնական և ուղեկից բաղադրիչների ֆանակը (տոննաներով), որը կարող է ստացվել հանքավայրում ջրօգտագործման հաշվարկային ժամկետում՝ ներառյալ նաև վերամշակման ժամանակ առաջացող անխուսափելի կորուստները: Ջերմաէներգետիկ ջրերի հանքավայրերում, բացի շահագործական պաշարներից, գնահատվում է նաև հանքավայրի ջերմաէներգետիկ հզորությունը (գիգաջուլ/տարիով, մեգավատտերով, պայմանական վառելանյութի տոննաներով):

10. Այլ օգտակար հանածոների հանքավայրերը յուրացնելիս և ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով օգտագործելիս (ստորերկրյա կառույցներ) ցամաքաբանական և ուղեկից ջրերի պաշարները նույնպես ենթակա են պետական ընդերքաբանական փորձաքննության և պետական հաշվառման՝ դրանց հետագա օգտագործման հնարավորության, հեռացման անհրաժեշտության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնավորվածությանը համապատասխան:

11. Ջրամատակարարման նպատակով ջրերի հանքավայրերի (օբյեկտների) ընտրության ու հետախուզման, ջրերի օգտագործման տնտեսական նպատակահարմարության որոշման և ջրհան կառույցի տեխնիկատնտեսապես ռացիոնալ սխեմայի հիմնավորման համար պետք է իրականացվի բոլոր տեսակի ջրերի (խմելու, տեխնիկական, հանքային, արդյունաբերական, ջերմաէներգետիկ, այդ թվում՝ շագջրային խառնուրդներ) հանքավայրերի (տեղամասերի) երկրաբանատնտեսագիտական գնահատում: Հանքային, արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի համար հիմնավորվում են նաև համապատասխան կոնդիցիաների պարամետրերը:

12. Խմելու, տեխնիկական և հանգային ջրերի որակը գնահատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող ստանդարտների, տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան:

13. Խմելու և հանգային ջրերն ուսումնասիրվում և օգտագործվում են դրանց նպատակային նշանակությամբ: Հանգային ջրերի օգտագործումը բուժական նպատակով թույլատրվում է առողջապահական ոլորտի լիազորված մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա:

14. Արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի որակը գնահատվում է ըստ տեխնիկատեսակապես հիմնավորված կոնդիցիաների, որոնք հաշվի են առնում այդ ջրերի առավել արդյունավետ մեթոդներով արդյունահանումը, վերամշակումը, համալիր օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանությունը:

II. ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ (ՏԵԼԱՄԱՍԵՐԻ) ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՒԹՅԱՆ

15. Ջրերի հանգավայրերը (տեղամասերը)՝ ըստ ջրաերկրաբանական, ջրատնտեսական, երկրաէկոլոգիական, լեռնաերկրաբանական, ջրաֆիզիկական, երկրաջերմային պայմանների բարդության և հաշվարկային ջրաերկրաբանական պարամետրերի (ջրատար հորիզոնի արդյունավետ հզորություն, ջուր պարունակող ապարների ֆիլտրացիոն հատկություններ՝ ֆիլտրացիայի, ջրահաղորդականության, ճեղքանցողականության և մակարդակահաղորդականության գործակիցներ, ջրերի որակի ցուցանիշներ և մակարդակների դիրքեր, ստորերկրյա սնման և ստորերկրյա հոսքի գործակիցներ, ջրածխածնի և ալյուրի վոլիոխականության աստիճանի, ստորաբաժանվում են հետևյալ խմբերի՝

1) **1-ին խումբ:** Պարզ ջրաերկրաբանական, ջրատնտեսական, երկրաէկոլոգիական, լեռնաերկրաբանական, ջրաֆիզիկական և երկրաջերմային պայմաններ ունեցող հանգավայրեր (տեղամասեր), որոնք բնութագրվում են ջրատար հորիզոնների հանդարտ (մերձհորիզոնական) տեղադրմամբ, դրանց կայուն հզորությամբ ու կառուցվածքով, ջուր պարունակող ապարների համասեռ ֆիլտրացիոն հատկություններով: Ջրերի շահագործական պաշարների ձևավորման հիմնական սնող աղբյուրները և շահագործման ժամանակ դրանց վոլիոխությունները կարող են հետախուզման գործընթացում բանակապես հավաստիորեն ուսումնասիրվել: Հետախուզման ժամանակ կարող է կատարվել շրջակա միջավայրի վրա նախագծվող ջրհան կառույցի բանակապես ու որակական հնարավոր ազդեցության հիմնավորված կանխատեսում: Հետախուզական աշխատանքների կատարումը և ջրերի պաշարների յուրացումը չեն պահանջում հատուկ տեխնոլոգիաների (ջրի պաշարների արհեստական համալրում, երկրաբաշխապտուտային համակարգեր, բարդ կոնստրուկցիայի խոր հորատանցքեր, նառագայթային ջրհան կառույցներ և այլն) կիրառում: Առավել վոլիոխուն հաշվարկային պարամետրի վոլիոխականության գործակիցը մինչև 60 տոկոս է:

2) **2-րդ խումբ:** Բարդ ջրաերկրաբանական, ջրատնտեսական, երկրաէկոլոգիական, լեռնաերկրաբանական, ջրաֆիզիկական և երկրաջերմային պայմաններ ունեցող հանգավայրեր (տեղամասեր), որոնք, պայմանավորված բարդ երկրաբանական կառուցվածքով, բնութագրվում են ջրատար հորիզոնների ոչ հանդարտ տեղադրմամբ, անկայուն հզորությամբ ու կառուցվածքով, ջուր պարունակող ապարների անհամասեռ ֆիլտրացիոն հատկություններով: Ջրաֆիզիկական և երկրաջերմային բարդ պայմանների հետևանքով ջրի որակի հնարավոր վոլիոխությունները կարող են որոշվել միայն մոտավոր՝ հաշվարկային եղանակով: Շահագործական պաշարները

ձևավորող սնուց աղբյուրների մի մասը և շահագործման ժամանակ այդ ջրերի ֆանակի փոփոխությունները կարող են որոշվել մոտավոր: Հնարավոր է գնահատել բնական միջավայրի միայն առանձին բաղադրիչների փոփոխությունները: Շահագործական պաշարների հետախուզման և յուրացման ժամանակ հատուկ տեխնոլոգիաների կիրառումը սահմանափակ է: Առավել փոփոխուն հաշվարկային պարամետրի փոփոխականության գործակիցը 60-150 տոկոս է:

3) 3-րդ խումբ: Շատ բարդ ջրաերկրաբանական, ջրատնտեսական, երկրաէկոլոգիական, լեռնաերկրաբանական, ջրաֆիզիկական և երկրաջերմային պայմաններ ունեցող հանքավայրեր (տեղամասեր), որոնք, պայմանավորված Շատ բարդ երկրաբանական կառուցվածքով, բնութագրվում են հեղձված և կարստավորված ապարներում ջրատար հորիզոնների սահմանափակ տարածմամբ, ջուր պարունակող ապարների հզորությունների և ֆիլտրացիոն հատկությունների խիստ փոփոխականությամբ: Ջրաֆիզիկական և երկրաջերմային Շատ բարդ պայմանների հետևանքով ջրի որակի հնարավոր փոփոխությունները կարող են որոշվել միայն ընդհանուր ջրաերկրաբանական և ջրատնտեսական վիճակի վերլուծության հիման վրա կամ շահագործվող այլ հանքավայրերի համանմանությամբ: Շահագործական պաշարները ձևավորող սնուց աղբյուրները կարող են ֆանակապես գնահատվել մոտավոր, իսկ շրջակա միջավայրի փոփոխությունների հնարավոր հետևանքները կարող են կանխատեսվել ըստ ընդհանուր երկրաէկոլոգիական վիճակի վերլուծության և շահագործվող ուրիշ հանքավայրերի համանմանությամբ: Հետախուզական աշխատանքների կատարումը պահանջում է հատուկ տեխնոլոգիաների կիրառում: Առավել փոփոխուն հաշվարկային պարամետրի փոփոխականության գործակիցը 150 տոկոսից ավելի է:

III. ՋՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱԹԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ

16. Ջրերի շահագործական պաշարներն ըստ ուսումնասիրվածության աստիճանի ստորաբաժանվում են հետախուզված **A**, **B**, **C**₁ կարգերի և նախնական գնահատված **C**₂ կարգի:

17. Ջրերի կանխատեսումային ռեսուրսներն ըստ հիմնավորվածության աստիճանի վերագրվում են **P** կարգին:

18. **A** կարգին վերագրվող ջրերի պաշարները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) ջրատար հորիզոնների հզորությունը, կառուցվածքը և տեղադրման պայմանները, ջրերի մակարդակների դիրքը, ջուր պարունակող ապարների լիթոլոգիական կազմը, հեղձածակոսկեությունը և ֆիլտրացիոն հատկությունների փոփոխություններն ըստ մակերեսի ու խորության (կտրվածքի), գնահատվող ջրատար հորիզոնների սնման պայմանները և մյուս հորիզոնների ու մակերևութային ջրերի հետ փոխադարձ կախվածության բնույթն ուսումնասիրված են ջրերի շահագործական պաշարները ձևավորող սնուց աղբյուրների հավաստի ֆանակական գնահատման և ջրերի պաշարների հաշվարկի ժամանակ ընդունվող սահմանային պայմանների հիմնավորման համար բավարար մանրամասնությամբ:

2) հաշվարկային ջրաերկրաբանական պարամետրերը որոշված են գնահատվող հանքավայրի (տեղամասի) շահագործման փորձով և ջրերի խմբային փորձնական արտամղումների (նեոսումային ջրերի դեպքում՝ բացթողումների) տվյալներով, և սրված է այդ պարամետրերի տարածական փոփոխականության գնահատումը:

3) ջրերի որակն ուսումնասիրված է տնտեսության մեջ դրանց նպատակային օգտագործման պահանջներին (ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, իսկ արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի դեպքում՝

կոնգրեսիաներին) համապատասխան բոլոր ցուցանիշներով, և միաժամանակ ապացուցված է, որ ջրօգտագործման հաշվարկային ժամկետում ջրերի որակը կլինի կայուն կամ կվիտիոսվի թույլատրելի սահմաններում.

4) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկություններն ուսումնասիրված են դրանցից ջերմության ու արդյունաբերական նշանակության բաղադրամասերի համալիր կորզմամբ ջրերի վերամշակման ռացիոնալ տեխնոլոգիական սխեմայի նախագծման համար բավարար ելակետային տվյալների ստացումն ապահովող մանրամասնությամբ.

5) ջրերի հանքավայրերի շահագործման ջրատնտեսական, սանիտարաեպիդեմիկ, էկոլոգիական և այլ պայմաններն ուսումնասիրված են գործող կամ նախագծվող ջրհան կառույցների սանիտարական պահպանության գոտիների հիմնավորումն ապահովող մանրամասնությամբ.

6) ջրերի հանքավայրերի շահագործման պայմաններն ուսումնասիրված են ջրերի հանքավայրի (տեղամասի) յուրացման նախագծի մշակման, այդ թվում՝ գործող ջրհան կառույցների և մակերևութային ջրաղբյուրների հիման վրա նախագծվող փորվածքների ազդեցության գնահատման համար անհրաժեշտ տվյալներն ապահովող մանրամասնությամբ.

7) ջրերի շահագործական պաշարները հաշվարկված են շահագործական փորվածքների փաստացի ու հաշվարկային ջրածախսերի, հետախուզական փորվածքների տևական խմբային փորձնական արտամուղմների (բացթողումների) փաստացի ու հաշվարկային ջրածախսերի, աղբյուրների տևական (մեկ տարվանից ոչ պակաս) ռեժիմային դիտարկումների ջրածախսերի հիման վրա, իսկ պարզ ջրերկրաբանական պայմաններում ջրերի շահագործական պաշարների լրացուցիչ հաշվարկը կատարված է փորձարկված հորատանցքերին հարակից նախագծային փորվածքների հաշվարկային ջրածախսերով.

8) հիմնական հաշվարկային պարամետրերի որոշման ժամանակ թույլատրելի սխալանքը մինչև +15 տոկոս է:

19. B կարգին վերագրվող ջրերի պաշարները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) ջրատար հորիզոնների հզորությունը, կառուցվածքը և տեղադրման պայմանները, ջրերի մակարդակների դիրքը, ջուր պարունակող ապարների լիթոլոգիական կազմը և ֆիլտրացիոն հատկությունների փոփոխություններն ըստ մակերեսի և խորության, գնահատվող ջրատար հորիզոնների սնման պայմանները և մյուս հորիզոնների ու մակերևութային ջրերի հետ փոխադարձ կապն ուսումնասիրված են այնպիսի մանրամասնությամբ, որը հնարավորություն է ընձեռում տալու ջրերի շահագործական պաշարները ձևավորող սնող աղբյուրների ընդհանուր բանակական գնահատումը և որոշելու դրանց պաշարների հաշվարկի ժամանակ ընդունվող սահմանային պայմանների բնույթը.

2) հաշվարկային ջրերկրաբանական պարամետրերը որոշված են ջրերի հանքավայրերի շահագործման տվյալների հիման վրա կամ փորձնական արտամուղմների (բացթողումների) տվյալներով: Պարզաբանված են այդ պարամետրերի տարածական փոփոխությունների հիմնական օրինաչափությունները.

3) ջրերի որակն ուսումնասիրված է տնտեսության մեջ դրանց նպատակային օգտագործման պահանջներին (ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, իսկ արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի դեպքում՝ կոնգրեսիաներին) համապատասխան բոլոր ցուցանիշներով, և միաժամանակ ապացուցված է, որ ջրօգտագործման հաշվարկային ժամկետում ջրերի որակը կլինի կայուն կամ կվիտիոսվի թույլատրելի սահմաններում.

4) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկություններն ուսումնասիրված են դրանցից ջերմության ու արդյունաբերական նշանակության բաղադրամասերի համալիր կորզմամբ ջրերի վերամշակման սկզբունքային տեխնոլոգիական սխեմայի նախագծման համար անհրաժեշտ աստիճանով:

5) ջրերի հանավայրերի շահագործման ջրատնտեսական, սանիտարափրկաբանական, էկոլոգիական և այլ պայմաններն ուսումնասիրված են ջրհան կառույցների նախագծման, դրանց շահագործման ռեժիմի, դիտողական հորատանցքերի ցանցի և սանիտարական գոտիների հիմնավորման մասին հանձնարարականների մշակման համար անհրաժեշտ տվյալների ստացումն ապահովող մանրամասնությամբ:

6) ջրերի հանավայրերի շահագործման պայմաններն ուսումնասիրված են ջրօգտագործման հաշվարկային ժամկետում հանավայրի (տեղամասի) շահագործման վրա այդ պայմանների ազդեցության սկզբունքային գնահատումն ապահովող աստիճանով:

7) **A** կարգի ջրերի պաշարների հետախուզում չպահանջող հանավայրերում (տեղամասերում) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկությունների ու բուր սեսակի ջրերի հանավայրերի շահագործման պայմանների ուսումնասիրվածության աստիճանը պետք է համապատասխանի **A** կարգի ջրերի պաշարներին ներկայացվող պահանջներին:

8) ջրերի շահագործական պաշարները հաշվարկված են շահագործական և հետախուզական փորվածքների փաստացի ու հաշվարկային ջրածախսերի, աղբյուրների՝ մեկ տարվանից ոչ պակաս ռեժիմային դիտարկումների ջրածախսերի հիման վրա, իսկ պարզ երկրաբանական պայմաններում ջրերի շահագործական պաշարների լրացուցիչ հաշվարկը կատարված է ըստ հանավայրի մակերեսի՝ ջրաերկրաբանորեն հիմնավորված արտարկման (էֆստրապոլյացիա) սահմաններում՝ նախագծային փորվածքների հաշվարկային ջրածախսերի հիման վրա:

9) հիմնական հաշվարկային պարամետրերի որոշման ժամանակ թույլատրելի սխալանքը $\pm 15 - \pm 35$ տոկոս է:

20. **C₁** կարգին վերագրվող պաշարները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) ջրատար հորիզոնների հզորությունը, կառուցվածքը և տեղադրման պայմանները, ջրերի մակարդակների դիրքը, ջուր պարունակող ապարների լիթոլոգիական կազմը և ֆիլտրացիոն հատկություններն ըստ մակերեսի և խորության պարզաբանված են այնպիսի աստիճանով, որը հնարավորություն է տալիս մոտավոր որոշելու ջրերի պաշարների հաշվարկի ժամանակ ընդունվող սահմանային պայմանները: Ջրերի շահագործական պաշարները ձևավորող սնող աղբյուրները որոշված են նույնպես մոտավոր կամ գնահատված են շահագործվող կամ հետախուզված հանավայրերի համանմանությամբ:

2) հաշվարկային ջրաերկրաբանական պարամետրերը որոշված են փորձնական և նմուշափորձային արտանդումների (բացթողումների) տվյալներով, մոտավորապես պարզաբանված են այդ պարամետրերի փոփոխությունների հիմնական օրինաչափությունները:

3) ջրերի որակը և դրա փոփոխությունները ջրօգտագործման հաշվարկային ժամկետում ուսումնասիրված են ջրերի նպատակային օգտագործման հնարավորությունը (ստանդարտների, տեխնիկական պայմանների, իսկ արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի դեպքում՝ կոնդիցիտների պահանջներին համապատասխանությունը) հիմնավորող աստիճանով:

4) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկությունները բնութագրված են ջրերի հետախուզված պաշարների արդյունաբերական արժողության հիմնավորման համար բավարար աստիճանով.

5) ջրերի հանավայրերի շահագործման ջրատնտեսական, սանիտարաէպիդեմիկ, էկոլոգիական և այլ պայմաններն ուսումնասիրված են ջրհան կառույցների տեղադրման համար անհրաժեշտ մոտավոր ելակետային տվյալների ստացումն ապահովող աստիճանով.

6) ջրերի հանավայրերի շահագործման պայմաններն ուսումնասիրված են այնպիսի աստիճանով, որը հնարավորություն է տալիս մոտավոր բնութագրելու հանավայրի (տեղամասի) շահագործման հիմնական առանձնահատկությունները.

7) ջրերի շահագործական պաշարները հաշվարկված են հետախուզական փորվածքների սահմանափակ թվով փորձարկման փաստացի արդյունքներով, իսկ պարզ ջրաերկրաբանական պայմաններում՝ նախագծային փորվածքների հաշվարկային ջրածախսերով, որոնք որոշվել են հանավայրի մանրագին հետախուզված կամ շահագործվող հարակից տեղամասերի համանմանության հիման վրա կամ առավել բարձր կարգերի ջրերի պաշարները հիմնավորող տվյալների արտարկմամբ.

8) հիմնական հաշվարկային պարամետրերի որոշման ժամանակ թույլատրելի սխալանքը $\pm 35 - \pm 55$ տոկոս է:

21. C₂ կարգին վերագրվող պաշարները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) ջրերի հանավայրի (տեղամասի) երկրաբանական կառուցվածքը և ջրաերկրաբանական պայմաններն ուսումնասիրված են ընդհանուր գծերով և հիմնված են հանավայրի (տեղամասի) տարածքում աղբյուրների փաստագրման, եզակի հետախուզական հորատանցքերի փորձարկման, երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև նույն կամ հարևան նմանատիպ հանավայրի առավել մանրամասն ուսումնասիրված այլ տեղամասերի համանմանության հիման վրա.

2) ջրերի որակը հետազոտված է եզակի նմուշներով և բավարարում է տնտեսության մեջ դրանց նպատակային օգտագործման պահանջները.

3) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկությունները գնահատված են տարածաբաշխում հայտնի այլ հանավայրերի նմանակմամբ՝ էլնելով տվյալ հանավայրի ջրերի եզակի նմուշների ֆիզիկական անալիզների տվյալներից.

4) ջրերի շահագործական պաշարները հաշվարկված են ջրհան կառույցների հաշվարկային արտադրականությանը համապատասխան՝ եզակի հետախուզական հորատանցքերի փորձարկման, երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների, հարակից մանրամասն հետախուզված հանավայրերի ջրաերկրաբանական համանմանության կամ առավել բարձր կարգերի ջրերի պաշարները հիմնավորող տվյալների արտարկման հիման վրա.

5) հիմնական հաշվարկային պարամետրերի որոշման ժամանակ թույլատրելի սխալանքը $\pm 55 - \pm 80$ տոկոս է:

22. P կարգին վերագրվող ջրերի կանխատեսումային ռեսուրսները գնահատվում են տարածաբաշխային ջրաերկրաբանական հետազոտությունների կամ փոքրամաստաբ երկրաբանական-ջրաերկրաբանական ֆարտեզագրման արդյունքում ստացված ընդհանուր պատկերացումների հիման վրա, ինչպես նաև առավել

ուսումնասիրված նույնատիպ տարածքների համանմանությամբ: Ջրերի կանխատեսումային ռեսուրսների գնահատման հիման վրա ջրհան կառույցների տեղադրումը բացառվում է: Այդ ռեսուրսները կարող են հիմք հանդիսանալ հեռանկարային տեղամասերում ջրահաշվեկշռային հաշվարկումների, ինչպես նաև ջրաերկրաբանական որոնողագնահատման աշխատանքների կատարման համար:

IV. ՋՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

23. Ջրերի շահագործական պաշարներն ըստ սնտեսական նշանակության ստորաբաժանվում են տարանջատ հաշվարկման և հաշվառման ենթակա 2 խմբի՝

1) հաշվեկշռային պաշարներ, որոնց օգտագործումը տեխնիկատնտեսական հիմնավորման և կոնդիցիաների (արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրեր) համաձայն ներկայումս սնտեսապես նպատակահարմար է ջրերի արդյունահանման, մշակման և վերամշակման առկա կամ արդյունաբերության կողմից յուրացվող առաջադիմական տեխնիկայի ու տեխնոլոգիայի կիրառման դեպքում՝ ապահովելով ընդերքի ռացիոնալ յուրացման և շրջակա միջավայրի պահպանության պահանջները.

2) արտահաշվեկշռային պաշարներ, որոնց օգտագործումը տեխնիկատնտեսական հիմնավորման և կոնդիցիաների (արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրեր) համաձայն ներկայումս սնտեսապես աննպատակահարմար է կամ՝ տեխնիկապես ու տեխնոլոգիապես անհնար, սակայն դրանք հետագայում կարող են վերածվել հաշվեկշռային:

24. Ջրերի արտահաշվեկշռային շահագործական պաշարները հաշվարկվում և հաշվառվում են այն դեպքում, եթե ապացուցված է հետագայում դրանց արդյունահանման և օգտագործման հնարավորությունը:

V. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՋՐԵՐԻ ՀԵՏԱԿՈՒԶՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ

(ՏԵՂԱՄԱՍԵՐԻ) ՆԱԿԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

25. Ջրերի հետախուզված հանգավայրերը (տեղամասերը) արդյունաբերական յուրացման համար նախապատրաստված են համարվում հետևյալ պայմանների պահպանման դեպքում՝

1) ջրերի հաշվեկշռային շահագործական պաշարները սահմանված կարգով հաստատված են գործակալության կողմից.

2) սահմանված կարգով հաստատված ջրերի հաշվեկշռային շահագործական պաշարները, որոնք օգտագործվում են նոր ու վերակառուցվող ջրհան կառույցների և ջուր արդյունահանող ու վերամշակող օբյեկտների նախագծման ժամանակ, պետք է ունենան տարբեր կարգերի շահագործական պաշարների հետևյալ հարաբերակցությունը (տոկոսներով)՝

Աղյուսակ

NN ը/կ	Ջրերի շահագործական պաշարների կարգերը	Ջրերի հանգավայրերի խմբերը		
		1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
1.	A+B	80	80	50
2.	այդ թվում՝ A (ոչ պակաս)	40	20	-
3.	C ₁	20	20	50

Ջրերի շահագործական պաշարների տարբեր կարգերի՝ աղյուսակում ներկայացված հարաբերակցությունն առանձնապես պետք է պահպանվի ջրի առաջնահերթ պահանջարկի բավարարման համար առկա և կառուցման համար նախատեսվող ջրհան կառույցների տեղամասերում: Ջրի հեռանկարային պահանջարկի բավարարման համար ջրերի շահագործական պաշարները պետք է հետախուզվեն առնվազն **C₁** կարգով: **1-ին** և **2-րդ** խմբերի հանգավայրերում (տեղամասերում) **A** կարգով և **1-3-րդ** խմբերի հանգավայրերում (տեղամասերում) **B** կարգով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հետախուզված ջրերի շահագործական պաշարների ֆանակների գերազանցումն աղյուսակում նշվածների համեմատությամբ, առանց հիմնավորման, նպատակահարմար չէ: Ջրերի սակավ շահագործական պաշարներ և կանխատեսումային ռեսուրսներ ունեցող տարածաշրջանների **1-3-րդ** խմբերի հանգավայրերում (տեղամասերում) նպատակահարմար համարել հետախուզված **C₁** կարգի ջրերի շահագործական պաշարների ֆանակի գերազանցումն աղյուսակում ներկայացված նորմատիվների համեմատությամբ: Յուրաքանչյուր կոնկրետ հանգավայրի (տեղամասի) համար **C₁** կարգի այդպիսի շահագործական պաշարները հաստատվում են գործակալության որոշմամբ՝ այդ պաշարների հաշվարկման նյութերի փորձաքննության հիման վրա: **C₁** կարգի շահագործական պաշարները պետք է հաշվի առնվեն նախատեսվող ջրհան կառույցների նախագծման (**3-րդ** խմբի հանգավայրեր ու տեղամասեր) և առկա ջրհան կառույցների հեռանկարային ընդլայնման ժամանակ (**1-ին** և **2-րդ** խմբերի հանգավայրեր ու տեղամասեր): **1-ին** և **2-րդ** խմբերի հանգավայրերում (տեղամասերում) կարող են հաստատվել նաև **C₂** կարգի ջրերի շահագործական պաշարներ՝ այդ հանգավայրերի (տեղամասերի) ջրերի ներգոր (պատենցիալ) հնարավորությունների գնահատման ու հաշվառման նպատակով: **C₂** կարգի ջրերի շահագործական պաշարների հաշվարկված ֆանակի լրիվ կամ մասնակի հաստատման հարցը լուծվում է ընդերքաբանական փորձաքննությամբ: Աղյուսակի տվյալների համեմատությամբ հետախուզվածության ավելի ցածր աստիճանի դեպքում բոլոր խմբերի նոր հետախուզված հանգավայրերի (տեղամասերի) արդյունաբերական յուրացման հնարավորությունը պաշարների հաստատման ժամանակ սահմանում է գործակալությունը՝ ջրերի շահագործական պաշարների հաշվարկման նյութերի փորձաքննության հիման վրա:

3) ջրերի որակն ուսումնասիրված է տնտեսության մեջ դրանց նպատակային օգտագործման պահանջներից (ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, իսկ արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի դեպքում՝ կոնդիցիաներին) համապատասխան բոլոր ցուցանիշներով, և միաժամանակ ապացուցված է, որ ջրօգտագործման հաշվարկային ժամկետում ջրերի որակը կլինի կայուն կամ կվախճվի բույլատրելի սահմաններում:

4) արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի տեխնոլոգիական հատկություններն ուսումնասիրված են դրանցից ջերմության ու արդյունաբերական նշանակության բազադրամատերի համալիր կորզմամբ ջրերի վերամշակման ռացիոնալ տեխնոլոգիական սխեմայի նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ստացումն ապահովող մանրամասնությամբ:

5) ջրերի հանգավայրերի շահագործման ջրատնտեսական, սանիտարահիգիենիկ, էկոլոգիական և այլ պայմաններն ուսումնասիրված են գործող կամ նախագծվող ջրհան կառույցների սանիտարական (լեռնասանիտարական) պահպանության գոտիների հիմնավորումն ապահովող մանրամասնությամբ:

6) ներկայացված են առաջարկություններ ընդերքի պահպանության, շրջակա միջավայրի աղտոտման կանխման և (կամ) արտադրական թափոնների օգտահանման ու վնասագերծման, մասնավորապես, արդյունաբերական, ջերմաէներգետիկ և հանգային ջրերի օգտագործումից առաջացած հոսքաջրերի հեռացման

կամ այլ նպատակներով (տեխնիկական, ոռոգման) վերստին օգտագործման, ինչպես նաև խախտված հողերի վերականգնման միջոցառումների մեակման վերաբերյալ.

7) ջրերի հանգավայրերի շահագործման պայմաններն ուսումնասիրված են հանգավայրի (տեղամասի) յուրացման նախագծի մեակման համար անհրաժեշտ տվյալներն ապահովող մանրամասնությամբ.

8) տրված են հանգավայրի (տեղամասի) A, B և C₁ կարգերի հետախուզված ընդհանուր շահագործական պաշարների (և՛ հաշվեկշռային, և՛ արտահաշվեկշռային) տեխնիկատնտեսական գնահատումը, նախնական գնահատված C₂ կարգի շահագործական պաշարների հաշվարկներն ու հնարավոր հեռանկարի բնութագրիչը և P կարգի կանխատեսումային ռեսուրսների գնահատումը: Նշված են այն մակերեսները, որտեղ բացակայում են ջրատար հորիզոնները, ջուր պարունակող ապարները, և կարող են տեղաբաշխվել արտադրական ու ֆալաֆաջիական-բնակարանային նշանակության օբյեկտները:

VI. ՋՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ (ՏԵՂԱՄԱՍԵՐԻ) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

26. Ջրհան կառույցների, ջրեր արդյունահանող և վերամշակող օբյեկտների շինարարության ու վերակառուցման նախագծման ժամանակ հաշվի են առնվում սույն դասակարգման 27-րդ կետի համաձայն հաստատված հաշվեկշռային պաշարները:

27. Ջրեր արդյունահանող և վերամշակող օբյեկտների շահագործման, դրանց վերակառուցման և նոր ջրհան կառույցների նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվեն՝

1) A կարգի ջրերի շահագործական պաշարները՝ գործող ջրհան կառույցների արտադրողականության ապահովման, վերակառուցվող և նոր կառուցվող ջրհան կառույցների նախագծման համար.

2) B կարգի ջրերի շահագործական պաշարները՝ բոլոր խմբերի հետախուզված հանգավայրերում ջրհան կառույցների նախագծման համար.

3) C₁ կարգի ջրերի շահագործական պաշարները՝ 3-րդ խմբի հանգավայրերում (տեղամասերում) ջրհան կառույցների նախագծման, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հանգավայրերում (տեղամասերում)՝ ջրհան կառույցների հնարավոր հեռանկարային ընդլայնման համար (ջրատարների հատույթի և պամպակայանների հզորության ընտրություն, շահագործական հորատանցքերի խորության ու կառուցվածքի և սանիտարական պահպանության գոտու որոշում, կառուցապատումից և աղտոտումից ջրհան կառույցի պահպանության միջոցառումների մեակում):

4) C₂ կարգի ջրերի շահագործական պաշարները՝ հանգավայրի (տեղամասի) սահմաններում ջրհան կառույցի ներքո հնարավորությունների գնահատման և այդ պաշարների հիման վրա հետագա հետախուզական աշխատանքների նախագծման ու իրականացման համար.

5) P կարգի ջրերի կանխատեսումային ռեսուրսները՝ ջրային ռեսուրսների համալիր օգտագործման և պահպանության սխեմաների, ջրատնտեսական հաշվեկշիռների կազմման ու որոնողագնահատման աշխատանքների պլանավորման համար:

28. Ջրերի շահագործվող հանգավայրերում (տեղամասերում) կատարվում են՝

1) ջրերի ֆանակի, որակի, մակարդակների սխտեմատիկ ռեժիմային դիտարկումներ ջրհան և ռեժիմային (դիտողական) հորատանցքերում՝ յուրաքանչյուր հորատանցքի համար գործակալության կողմից հաստատված ջրաերկրաբանական հաշվարկային պարամետրերի խստիվ պահպանմամբ.

2) անբավարար ուսումնասիրված մասերում (թևերում, տարանջատ տեղամասերում, օգտագործվող և չօգտագործվող ջրատար հորիզոններում) լրացուցիչ հետախուզական աշխատանքներ (լրահետախուզում): Դրանց արդյունքների հիման վրա իրականացվում է ցածր կարգերի ($C_1 + C_2$) պաշարների՝ ավելի բարձր կարգերին վերագրում և նոր բացահայտված պաշարների հաշվարկ:

29. Սույն դասակարգման 28-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված աշխատանքներն իրականացվում են ընդերօգտագործողների կամ ընդերօգտագործողների միջոցների հաշվին մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

30. Ջրերի հանքավայրերի (տեղամասերի) կոնդիցիաների պարամետրերը (արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի համար) ու շահագործական պաշարները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ենթակա են վերագնահատման և գործակալության կողմից վերահաստատման:

31. Ջրերի հանքավայրերի (տեղամասերի) կոնդիցիաների պարամետրերը (արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերի համար) ու շահագործական պաշարները ենթակա են նաև վերագնահատման և գործակալության կողմից վերահաստատման, եթե՝

1) փոփոխվել են ջրերի որակին կոնդիցիաներով, ստանդարտներով կամ տեխնիկական պայմաններով ներկայացվող պահանջները.

2) փոփոխվել են արդյունաբերական և ջերմաէներգետիկ ջրերից օգտակար բաղադրիչների ու ջերմության կորզման տեխնոլոգիական սխեմաները.

3) նախկինում հաստատված ջրերի շահագործական պաշարների ջրատնտեսական, բնական կամ սանիտարական պայմանները կրել են այնպիսի փոփոխություններ, որոնք էականորեն անդրադարձել են ջրերի նպատակային օգտագործման և (կամ) դրանց շահագործման ծավալների վրա՝ հանգեցնելով շահույթի 20 և ավելի տոկոսով աճի (նվազման).

4) լրացուցիչ հետախուզական աշխատանքների և (կամ) շահագործվող հանքավայրում կատարված ռեժիմային դիտարկումների արդյունքներով ջրերի հաշվեկշռային շահագործական պաշարների ավելացումը կամ նվազումը նախկինում հաստատված պաշարների համեմատությամբ եռամյա ժամկետում կազմել է 20 և ավելի տոկոս.

5) ջրերի հանքավայրի (տեղամասի) շահագործման փաստացի ժամկետը գերազանցել է պաշարների հաստատման պահին ընդունված ջրօգտագործման հաշվարկային ժամկետը, և ըստ այդմ տեղի են ունեցել շահագործման պայմանների այնպիսի փոփոխություններ, որոնք առաջացրել են ջրհան կառույցի վերակառուցման անհրաժեշտություն: